

**ԱՆԳՂԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ
Ի ՄԻԶԻՆ ԱՄԻԱ**

Թուրքաստան, ինչպէս յայտնի է, այլ և այլ տէրութիւններ բաժնուելուն՝ այլ և այլ անուններով ալ կը կոչուի . ոմանք թուրքաստան և թաթարստան կը կոչեն, և այլք Մեծ Պուխարա և թուրան : Տարածութիւնն է 88,900 փարսախ քառակուսի, 'ի հիւսիսոյ սահման ունելով զիւռսաստան, յարևելից զջինաստան, 'ի հարաւոյ զՊարսկաստան, իսկ յարևմտից զկասպից ծով :

Թուրքաստան հինգ գաւառ կամտէրութիւն կը բաժնուի ըստ տեղական դրից . և են Պուխարա, Խոքանտ, Խիվա, Քունտուղ և Խըրդըզք : Այս հինգ գաւառաց կամտէրութեանց մէջ ամենէն աւելի ծանօթն հնոց և նորոց և ամենէն նշանաւորն Պուխարա եղած է, որ է մասն հին Բակտրիոյ : Երկիրը թէն ըստ մեծի մասին աւազուտ ու անբեր է, բայց ունի և բարեբեր կողմեր, որոնք անմշակ թողուած են 'ի թափառական և 'ի վայրենի բարուց ժողովրդեանն :

Սմըրղանտ որ նոյն տէրութեան զըլխաւոր քաղաքն է, կառուցեալ 'ի բարեբոյս հովտի, ունի անուանի դպրոցներ և մեծահոչակ արանց զերեզմանական շիրիմներ : Կը պատմեն որ Երբ Լէնկիմուր Ասիոյ նուաճած քաղաքց ճարտարներն ժողվելով տարաւ և հոն բնակեցուց, տարած ըլլայ միան գամայն Հայաստանէն և ուրիշ կողմերէն ընտիր մատեաններ և աշտարակի մը մէջ ծածկած ըլլայ : — Սմըրղանտէն զատ կայ համանուն աշխարհին՝ ուրիշ քաղաք մ'ալ Պուխարա անուն 100,000 բնակչով, որուն կերպասի, մետաքսի ու բամբակի դործարաններն նշանաւոր են : Խանը ունի այս քաղաքիս մէջ պարսպապատ մեծ դղեակ մը . ունի դարձեալ քաղաքը 360 մզկիթ, բաղնիքներ, կարաւանաց իջևաններ և 60 դպրոց, որոց մէջ կ'ըսեն թէ բիւր մի աշակերտք կը սորվին : Այս երկու-

քէն զատ կայ ուրիշ հնագոյն քաղաք մ'ալ Պալիս անուն, ուսկից առաջ եկած կը համարուի Պահաւունեաց անունը : Այս քաղաքը Զրադաշտայ վարդապետարան ու կրակի պաշտաման առաջին ասպնջական տեղին և պաշտօնարանն համարուած է :

Ասոնք են ահաւասիկ Պուխարայի պարծանքները . իսկ միւս չորս աշխարհներն՝ չունին յիշատակաց արժանաւոր բան . միայն Խիվա վերջերս Ռուսիոյ հետ ըրած յամառեալ պատերազմներով առ ինքն դարձուց բոլոր աշխարհիս մտադրութիւնը, զրաւելով 'ի պատմութեան իր էջն :

Խիվա որ կոչի ևս Խարէզմ, սահման ունի 'ի հիւսիսոյ զխըրդըզ ու զԱրալ, և 'ի հարաւոյ զԱֆղանստան, և ոռոգեալ է յՈքսոս գետոյ ուստի և բարեբեր : Խիվա որ համանուն տէրութեան զլխաւոր քաղաքն է՝ ունի 12,000 բնակիչ, գեղեցիկ պարտէզներ և բազմաթիւ մրգկիթներ : Խիվացիքնախանձայոյզ մահմետականք են, ուստի և ոխերիմ թըշնամիք Պարսից, 'ի պատճառս մէջերնին եղած կրօնական տարբերութեանց : Խիվացիք շատ յետամնաց են յարուեստս, վայրենի կեանք կ'անցունեն, բայց ճարտար են դաշտերը ոռոգելու մէջ . կանայք կը հիւսեն շալ և մետաքսէ ու բամբակէ այլ և այլ ըզգեստներ, զորոնք 'ի վաճառ կը հանեն դրկելով կարաւանաց ձեռքով 'ի միջավայրս Ասիոյ : Խիվացիք միշտ ատելի եղած են իրենց շրջաբնակ ժողովրդոց, աւարառու և աւազակաբարոյ կենաց համար : Եւ որովհետև յելուզակաբար բռնելով Ռուսները 'ի գերութիւն կը վարէին, անոր համար ասիկա պատճառ մ'առած է Ռուսիա արշաւելու նոյն երկրին վրայ սկսեալ յամէ 1839 . և կ'երեւայ թէ ինչպէս նոյն ատենէն սկսեալ բեղրոպուրկի խորհրդարանը հարկ կ'ըզգար ամբարտակ կանգնելու ընդդէմ Անգղիոյ՝ որ օր օրուան վրայ կը տարածէր իր իշխանութիւնը միջին Ասիոյ մէջ : Բայց ձախող դնաց արշաւանքը . և Օրէմպուրկի կառավարիչն

զօրապետն Բերովաքի որ առաջնորդ կարգեալ էր նոյն արշաւանաց, մինչև Եկմազա գետոյն ափունքը հասնելէն ետքը՝ ստիպուեցաւ ետ դառնալ, ինչու որ այն ընդարձակածաւալ անապատից մէջ ուսկից ստիպեալ էր անցնելու իր բանակը, մեծամեծ ու անյաղթելի արգելներ ընդ առաջ ելան։ Արդէն այսպիսի փորձ Մեծն Պետրոս ալ ըրեր էր յամին 1717 և անյաջող գնացեր։

Թէպէտ անյաջող գնացին 1717 և 1839 ամաց փորձն ու արշաւանքներն, բայց Ռուսիա չյուսահատեցաւ, այլ նոր փորձ մալ փորձեց տարւոյս սկիզբը մեծագոյն պատրաստութեամբ և յաջողեցաւ, զոր այսպէս կը նկարագրէ Բեղրոպուրկի կողոս անուն լրագիրը։

« Ռուսական բանակը նորանոր փառք պայծառացաւ. և իրաւունք ունի ըսելու առանց սնապարծութեան, թէ ասոր նման փառք չի գտնուիր 'ի քսան և երկու դարուց հետէ այս կողմանց պատերազմի տարեգրաց մէջ։ Ալեքսանդր Մակեղոնացւոյն օրէն 'ի վեր որ հասուց իր աշխարհակալական պատերազմներն մինչև այս կողմերս՝ որք կոչին այսօր անապատք թիւրքմենաց, ընդունայն տեղ կը փնտուեմք այսպիսի գժուարին միանգամայն և յաջող արշաւանք, զոր լմբնցած կրնամբ համարիլ Խիվայի առմամբը։

« Երկու հարիւր փարսախ տեղ կը տրեց Վէրէվքին զօրապետն՝ Օրէմպուրկէն մեկնած զօրաց խմբով։ Զորս ամիս քալեց նախ թանձր ձեան և ապա հրատոչոր աւաղոյ վրայ։ Թիւրքաստանէն գնացող զօրաց խումբն իրաւ է որ աւելի համառօտ ճամբայ կտրեց, բայց ստիպուեցաւ անապատներէ անցնիլ, ուսկից հազիւ երբեք պղտի կարաւաններ կ'անցնին, որուն դեռ և մէկ մասն անծանօթ է։ Զօրաց այն երկու խումբքն որոց աղետիցը բաժանակից եղեր էին և կայսերական ընտանեացմէ երկու անձինք, պարտաւորեցան գետէ մանցնիլ, որուն վրայէն անցնիլն նոյն իսկ Եւրոպիոյ մէջ զօրաւոր արգել մը համարուած է, ուր մեծ բազմութիւն կա-

մըրջաց և անցից ուրիշ միջոցներ կան, բայց Ասիոյ մէջ կրնայ համարուիլ անպարտելի պատնէշ։ Մէկ քանի քաղաքքը յարձակմամբ առնուեցան։

« Ամբողջ իշխանութիւն մը որուն հասնելու համար երեք ամիս հարկ եղաւ քալել, երեք շարթուան մէջ նուանեցաւ։ Թշնամին փորձեց դէմ կենալ. թէպէտ թուով քան զմեզ աւելի էր, և այս առաւելութիւնն ալ ունէր որ կը ճանչնար երկիրը ու կլիմային վարժ էր, բայց այնու հանդերձ չի յաջողեցաւ։ 1873 ամին փառաւոր արշաւանաց պայծառութիւնն մոռացնել կուտայ 1717 և 1839 ամաց անյաջող արշաւաքներն, և մեծարել կու տայ զմեզ առաջի ասիաբնակ ժողովրդոց։ Գաղղիացւոց պատերազմներն յեգիպտոս և յԱսորիս, և անգղիական արշաւանքն յԱպիսսինիա, ունենալսվ հանդերձ իրենց արժանաւոր փառքն, երկրորդական գործ կը համարուին առաջի ռուսական արշաւանաց, այն ինչ 'ի զլուխ տարեալ։»

Բայց ինչ է արգեօք Ռուսիոյ վախճանն որ կրկին և կրկին անդամ այնպիսի դժուարին և տաժանելի արշաւանաց ձեռք կը զարնէ. միթէ ունի կարօտութիւն տարածելու իր իշխանութեան սահմանը։ Համատեղացի Ռուսաշտօնական ուրիշ լրագիր մը ուղելով մեր այս հարցմանցը պատասխանել, Ռուսիոյ ունեցած նպատակացը անհրաժեշտ կարեսոր չի համարիր նոյն երկրին Ռուսիոյ կայսրութեան հետ միանալը. և բացարձակապէս կը մերժէ այն գաղափարն իբր թէ Ռուսիա կ'ուզէ ուրիշ աշխարհակալութիւններ ընել Ասիոյ մէջ, և այսպէս կ'ըսէ.

« Եւ որովհետև մեծատարած ընդարձակութեամբ կը տարածուի Ռուսիա 'ի մէջ Ասիոյ և Եւրոպիոյ, անոր համար կարեսոր շահ մը չունենար միացընելով Խիվան իր երկրին հետ։

« Այդ երկրին կարօտ չէ Ռուսիա. միայն իրեն փափաքն այն է, որ ձգէ զնա քաղաքական ու վաճառականական կենաց հորիզոնին վրայ. և կոր-

ծանէ այն ճիւաղն՝ որոյ վերայ կը դնեն յոյսերնին Ռուսիոյ նիզակակից Ասիոյ կենդրոնաբնակ ժողովուրդները:

« Այս նպատակին դիւրաւ կը համնի՝ եթէ այդ երկրին մէկ մասը իր երկրին հետ միացնելու ըլլայ, որով պղտի կերպով կախումն ունենայ 'ի Ռուսիոյ: Եւ այս կախումը անհրաժեշտ կարեորէ ապագայ պատերազմաց առջևն առնելու համար. և ուրիշ կողմանէ տարօրինակ բան մը կ'ըլլայ պահանջելն՝ որ Ռուսիա այս արշաւանաց մեծամեծ զոհերն ձրի ընէ: Ռուսիոյ Խիվայի նկատմամբ ունեցած շահն այնպէս մեծ է, որ եթէ որոշած է միանգամ ձեռք բերել զայն՝ չի կրնար կէս ճամբէն ետդառնալ:

« Բայց անոնք որ կը համարին թէ Ռուսիա միտք ունի արշաւել 'ի վերայ Պարսից կամ Անդղիոյ Հնդկաստանին մէջ ունեցած երկիրներուն վրայ, մեծապէս կը սխալին: Անմարթ է առանց անկանելոյ 'ի վրիպանս, համարել ըզ-Ռուսիա միայն իբրև աշխարհակալ տէրութիւն: Ամեն ողջամիտ մարդ կըրնայ ըմբռնել որ կայսրութեան կարի մեծատարած ընդարձակութիւնն առանց համապատասխանող ժողովը դրդեան, աւելի վնասակար է քան թէ օգտակար: Խիվայի արշաւանքը որչափ ալ գործունէութեամբ 'ի զլուխ տարուեցաւ, ուրիշ բան չէ բայց եթէ պաշտպանողական արշաւանք մը, պաշտպանելու մեր շահը կենդրոնական Ասիոյ մէջ, և վերջ տալու մեր նոյն կողմանց անվերջանալի պատերազմացը »:

Այս կերպով մեկնեցին ահաւասիկ Ռուսիոյ լրագիրք ուուսական տէրութեան վերջին արշաւանքը 'ի Խիվա: Բայց Անդղիոյ լրագիրք մէկէն բարձրցուցին ձայներնին, և խորհուրդ կուտային որ Խիվայի արշաւանաց առջևն առնըցուի, և արգել մը կանգնուի Ռուսիոյ աշխարհակալութեանց դէմ: Կ'ըսէին թէ Ռուսաց Խիվայի տիրելն բոլոր զթուրքաստան նուածել ըսել է ու տէրըլլալ Ոքսոսի ընթացիցը: Թէպէտ Ռուսիա մեկնութիւն կու տայ ըրածին՝

ըսելով թէ կարգի դնելու համար է բարբարոս ժողովուրդները, բայց անցեալ արշաւանաց ու տիրապետութեանց ատեն ևսնոյն պատճառակն կը պատճառէր. և եթէ յաջողի այս անգամ, կրնայ մէկը ապահովել զմեզ թէ կանկ պիտի առնու 'ի Խիվա, և պիտի չի յառաջէ դէպ 'ի անգղիական Հընդկաստան, սպառնալով ուղղակի ընդդէմ Քապուլի:

Իսկզբան թէ և անգղիական լրագիրք մեծ ըմբռնելով վտանգը այս կերպ սկսան խօսիլ, բայց ապա մխիթարելով զիրենք՝ Թայմզ լրագրոյն հետ ըսին. Վտանգը կարծուածին չափ մեծ չէ. Ռուսիա չուզեր պատերազմբանալ Անգղիոյ հետ. ձեռնարկութիւնը յաջողի պիտի արդեօք. Ռուսիա արդէն կրկին անգամ փորձեց արշաւել Խիվայի վրայ, բայց չի կրնալով պաշար հասցընել, կորսնցուց զօրքերը, ձիերը և ուղտերը. Նոյնը պիտի պատահի անշուշտ այս անգամ ալ: Եւ եթէ յաջողի իսկ, ինչ որ ըրաւ Անդղիա Ապիսախնիոյ, ինքն ալ նոյնը պիտի ստիպուի ընել. այն է շուտով թողուլ երկիրը ու հեռանալ: Եւ եթէ ուրիշ կերպ պատահի, Անդղիա պիտի խօսի և պիտի լսեցնէ ձայնը. և վերջապէս սահման պիտի գծուի երկու տէրութեանց երկիրներուն մէջ, և գործը յօդուտ Անդղիոյ պիտի վերջանայ: Բայց երբ լսեցին Անդղիացիք թէ այս անգամ Ռուսիոյ պատրաստութիւններն շատ աւելի մեծ են քան ինչ որ ուրիշ անգամ, և թէ բռնած են Արալ ծովուն եղելքը, ու շոգեշարժ նաւերով կրնան առատ պաշար հասցընել զիվան պաշարող ուուսական բանակին, այն ատեն Թայմզ դարձեալ բարձրացուց ձայնը ու ըսաւ. Անդղիա շատ աւելի զօրաւոր է քան զՌուսիա 'ի Հնդկաստան. անգղիական սահմանը գետով ու լեռներով պատած ըլլալով, անպարտելի պատնէշ մ'է ընդդէմ ու է թշնամոյ: Անդղիացիք աւելի միջոց ունին պաշար հասցնելու քան զՌուսս, և Անդղիա վստահ է իր զինուցը վրայ պատերազմելու Ռուսիոյ

Հետ: Կարող է ապստամբեցընել բարբարոս ժողովուրդները, և միացնել իր դրօշուն տակ. վերջապէս՝ Եւրոպիոյ մէջ Անգղիացիք խաղաղասէր համարուած են, բայց Ասիոյ մէջ բոլորովին տարբեր են. պատերազմական են, պատերազմական առաւել քան զիտուս, և զայս իրենք ալ գիտեն:

Այնպէս տագնապաձայն աղաղակեց մամուլն, որ անգղիական խորհրդարանն իսկ խռովեցաւ: Անոր համար Լորտ կրանվիլ փութաց մէկէն յայտադիր մը ուղղել 'ի բեղրոպուրկ և մեկնութիւն ուղել գործոյն: Ուուսիա փութաց մէկէն փոխանակ պատասխանւոյ զկոմսն Շուվալոֆ Լոնտուա դրկել, և այս երեսելի անձին ընտրութիւնը գործոյն աւելի մեծ կարևորութիւն կու տար: Կոմսն Շուվալոֆ որ գլուխ է ոստիկանաց քաղաքի և առաջնորդ ոստիկանութեան, մասնաւոր կերպով բարեկամ և մտերիմ խորհրդակից համարուած է Ալեքսանդր կայսեր: Սա զնաց 'ի Լոնտուա, կեցաւ հոն, տեսաւորեցաւ ընդ անգղիական պաշտօնեայս և ապա մեկնեցաւ: Թէպէտ նոյն ատեն պատգամաւորութեան արդիւնքը դուրս չելաւ, բայց իմացուեցաւ ապա թէ Շուվալով կոմսն համոզած ըլլայ զԱնգղիա թէ Ուուսիոյ ընելիք արշաւանաց մէջ Անգղիոյ ամենեին վտանգ չկայ, ոչ մերձաւորապէս և ոչ հեռաւորապէս. և թէ Հնդկաստանի առաջին վիճակն անարատ պիտի պահուի: Ուուսիա այսպէս զԱնգղիա հանդարտեցնելէն ետքը անարգել իր արշաւանաց գործոյն ձեռք զարկաւ և աւարտեց յաջողութեամբ:

Ուրեմն այսպէս թէպէտ առ ժամս վտանգ չկայ, և հասած չէ Ասիոյ միջավայրը Անգղիոյ և Ուուսիոյ զինուք իրարու հանդիպելու վայրկեանը, բայց որովհետեւ մենք վտանգը շատ հաւանական և սպառնական կը տեսնեմք, անոր համար գծեմք աստանօր երկունախանձընդղէմ տէրութեանց սահմանները:

Անգղիական երկիրները կը սահմաննեն 'ի հիւսիսոյ լերինք Աֆղանստանի.

Փէշաւուր քաղաքը Անգղիացւոց ամենէն յառաջաղէմ կէտն է: Իրենց սահմանէն անդին հիւսիսային արևմտակողմը երկիր մը կը տարածուի զոր զրեթէ չէզոքացուցած են, այն է Աֆղանստան, որ 60 միլիոն եկտար տարածոյն ունի, ուստի մեծ քան զԳաղղիա: Պաշտօնապէս այս երկրին կախումը 'ի Պարսից է, բայց Անգղիացիք կամաց կամաց հանելով Պարսից իշխանութեան տակէն, կը կարծեն այսօր թէ իրենց իշխանութեան տակ է: Աֆղանստանի չէզոքութիւնը Անգղիոյ համար մեծ կարևորութիւն ունի. վասն զի Հնդկաստանի վաճառականութեան երկու ճամբաներն կը հատանեն զԱֆղանստան, ասոնց մին է կասպից ճանապարհը, որ կը մեկնի համանուն ծովէն, Հերաթէն որ Աֆղանստանի քաղաք մ'է 50,000 բնակչօք, և կոչի Առաջին բանալի Հնդկաց: Երկրորդ բանալին է Քապուլն, որ է ուրիշ քաղաք Աֆղանստանի:

Աֆղանստանէն անդին արևմտակողմը կայ Պարսկաստան. որոյ վերայ ապահով են Անգղիացիք թէ պիտի պահէ իր անկախութիւնն: Իսկ Աֆղանստանի հիւսիսակողմը կը տարածուի ուրիշ ընդարձակ երկիր մը, թուրքաստան, որուն անունը վերը յիշատակեցինք, խեղճ և վատառողջ երկիր, բնակեալ յաւարառու և 'ի բարբարոս ժողովը. որոյ վերայ գաղղիացի ճանապարհորդ մը այս նկարագրութիւնս կ'ընէ.

« Ասոնք, կ'ըսէ, տխուր դաշտավայրներ են, որոց աղուտ աւագներն, կարմրագոյն կաւերն, գեղին խոտերն, տըկար կաղանչաններն (euphorbe) և արենագոյն օշնաներն (salicorne) կը բախեն հողմք: կը շնչէ հողմը մեծատարած ծովալճին կնիւնոց և եղեգանց մէջ, թէ որ մարախաց բանակն ապականած չըլլայ դիւրաթեք ծառերն մինչև իրենց ցօղունը. թուրքաստանի ամառը այրեցական է, իսկ ձմեռը կարի ցուրտ. օղը կարգէ գուրս չոր, վտակաց ափունքն միայն բարեբեր, իսկ անկէ դուրս բոլոր ամայութիւն...: Արալ ծովէն մին-

շե Ռւրալ գետ ուրիշ ծառ չեմք տեսներ, բայց եթէ կաղամախ, և հեռաւորութիւնն է 500 քիլոմետր:

«Թուրքաստան սահմանակից է Ռուսիոյ: Ռուսիա արդէն 'ի վաղուց հետէ կը տարածուի այս ընդարձակ երկրին վրայ. Եկած է հոն ապահովելու իր վաճառականութիւնը և սանձելու անսանձ ժողովուրդները: Իրեն իշխանութեան տակ կ'առնու զանոնք, և կը հաստատէ զինուորական գաղթականութիւններ: Յամին 1867 նուանեց զխոքանտ որ թուրքաստանի արևմտակողմը կ'իյնայ. 1868ին յառաջեց մինչև 'ի Սմբրդանտ, և գրաւեց զՊուխարա: Այսպէս կը մօտենայ ոտն առ ոտն անգղիական երկիրներուն: Սմբրդանտէն Պալիսի և Քապուլի ուղղութեամբ Ռուսք 1000 քիլոմետր տեղ հեռու կը գրտնուին Փէշաւուրէն, որ Անգղիացւոց յառաջացեալ կէտն է»:

Բայց Անգղիոյ երկիրւղը միայն այն չէր որ Ռուսիոյ մերձաւորութիւնը կը քարանգաւոր ըլլալ իրեն: Կը վախէ դարձեալ որ չըլլայ Ռուսիա պաշտպանութիւն ընէ Անգղիոյ լուծէն ազատել ուղղ ժողովրդոց, կամաց կամաց ապրատամբեցընէ զՀնդիկս և թուրքաստանի բարբարոս ժողովուրդներն: Եւ ասիկա արդարացի երկիրւղ մ'է. Եթէ պատերազմ ծագելու ըլլայ, Ռուսիա ամենայն հնարք պիտի 'ի գործ դնէ չկորուսանելու զայն: Ռուսիա քան զԱնգղիա աւելի փոյթ կը ցուցնէ տիրելու ասիկական ժողովրդոց վրայ:

Ռուսիա Պոնաբարդի մտածածը 'ի գործ դնէ. այն է անգղիական զօրութիւնն 'ի Հնդկաստան 'ի մնաս իրեն գործածել: Տագնապաժամը կրնայ դեռ ևս երկարիլ. բայց պիտի ծագի պատերազմը կանուխ կամանագան: Եւրոպա պէտք էր վերջ տալ այս խնդրոյն Արևելեան խնդրոյն հետ. և չընելով ահաւասիկ կը սաստկանայ և ասիական խնդիր մը կը դառնայ:

Անիմանալի բան մ'էր, որ մինչ անգղիացի մեծ քնագէտ մը կը մեկնէր իմաստնոց այն համբաւաւոր հայեցողու-

թիւնն՝ կոհիւ վասն եռքեան, կար Անգղիոյ մէջ քաղաքավարչական դրագոց մը որ սկիզբ կը դնէր իրեն եռքեան առանց կոռուոյ: Բայց մենք կ'ըսեմք որ եթէ Անգղիա կ'ուղէ յոտին կալ, պէտք է որ կոռուի. և որովհետեւ Ռուսիա է որ կամաց կամաց պիտի ծանրանայ Եւրոպիոյ վրայ, և պիտի բռնադատէ զԱնգղիա 'ի կոիւ, անոր համար կոիւն ընդհանուր Եւրոպական պիտի ըլլայ: Այս այսպէս պիտի ըլլայ, վասն զի սպառնական է, վասն զի պատմական ճշմարտութիւն մ'է, ամեն ժամանակի գործ է, և զպրոցական հայեցողութիւնք չեն զօրեր առաջի պատմութեան:

ՊՐԵԶԻԼ

ԵՒ

ԿԱՅՍՐԻ ՈՒ ԿԱՅՍՐՈՒՀԻՄ ՊՐԵԶԻԼԻ

Հարաւային Ամերիկոյ այն ընդարձակածաւալ աշխարհն, որ յարևելից ունի սահման զԱտլանտեան Ովկիանոս, 'ի հարաւոյ զՈւրուկուայ, յարևմտից զՌիոյ Բլադայ, զԲարակուայ, զՊոլիվիա, զԲերու, Հասարակածի Տէրութիւններն և զՆոր կրանադա, իսկ 'ի հիւսիսոյ զկուայանա և զՎենեցիուելա, մեծ կայսրութիւն մը կը ձեացնէ, ուսկից հին տեղաբնակ ժողովուրդներն զրեթէ բոլորովին անհետացած են, թէպէտը ըստ ասելոյ ոմանց կան տակաւին մէկ քանի սակաւաթիւ ցեղեր: Կը հատանեն այս աշխարհը այլ և այլ ուղղութեամբ լերանց զանազան շղթաներ, որոց մէջ կենդրոնական շղթան որ կոչի լա Մէրրա Մանղիզուէյրա, ամեն լեռներէ աւելի բարձր կէտեր կ'ընծայէ, ինչպէս զՊուգուիրա որ 7,000 ոտք բարձրութիւն ունի, և զԲիդոյ տոս Օրկաոս որ մինչև 7,300 ոտք բարձրութեան կը հասնի, և կը ձգի դէպ հիւսիս: — կ'ոռոգանեն դարձեալ երկիրը բազում և մեծամեծ գետեր, որոց ամենքն ալ Ատլանտեան Ովկիանոս կը